

Հրատարակուած են Գալուստ Կիւլպէնկեան թարգմանական մատենաշարին առաջին երեք գիրքերը

Գալուստ Կիւլպէնկեան թարգմանական մատենաշարի առաջին երեք գիրքերը հրատարակուած են Հայաստանի մէջ: Մատենաշարը կը կեդրոնանայ ընկերային գիտութիւններու ու մարդկային ուսմանց կաեւորագոյն գրականութեան թարգմանութեան վրայ:

Առաջին հրատարակուած գիրքն է՝ Ջորջո Ագամբէի «Մնացորդը Աւշուիցի: Արխիւը եւ վկան» (*Quel che resta di Auschwitz. L'archivio e il testimone*), որ արեւմտահայերէնի թարգմանեց Մարկ Նշանեան, եւ հրատարակեց *Ակտուալ արվեստ*-ը: 1998 թուականին լոյս տեսած այս գիրքը կ'ուսումնասիրէ Աւշուիցէն վերապրողներու վկայութիւնները, փիլիսոփայական ու բարոյագիտական հարցադրումներու դիտանկիւնէն:

Մարկ Նշանեան կը բացատրէ միջազգային գրականութեան թարգմանութեան կարեւորութիւնը. «*Թարգմանելը անհրաժեշտ է քանի մը պատճառներով. նախ պէտք ունինք ծանօթանալու աշխարհի մէջ կարդացուած, եւ մանաւանդ համալսարաններուն պատերէն ներս կարդացուած գիրքերուն: Լեզու մը որպէսզի փաստէ ինքն իր կենդանութիւնը, պէտք է չափուի իրմէ դուրս եղած երեւոյթներուն, պէտք է չափուի օտարին, պէտք է չափուի ընդհանուր աւելի վերացական կերպով՝ օտարութեան հետ: Երկրորդ, թարգմանական աշխատանքը ի վերջոյ որքան նուրբ, միեւնոյն ժամանակ որքան դժուար աշխատանք մըն է, որովհետեւ կը պահանջէ որ թարգմանիչը ինքն իր լեզուին սահմանները փորձէ, փորձարկէ եւ ընդլայնէ: Նաեւ այս թարգմանական մատենաշարը լաւ առիթ մըն է որպէսզի երկու լեզուները [արեւելահայերէն եւ արեւմտահայերէն] իրար լսեն, իրարու հանդիպին, կարդան»:*

[\(Գիրքին մասին\)](#)

Երկրորդ գիրքը Յուրգեն Հաբերմասի «Հանրայնութեան կառուցվածքային փոփոխությունը: Հետազոտություններ բուրժուական հասարակության կատեգորիայի շուրջ» աշխատութիւնն է (*Strukturwandel der Öffentlichkeit. Untersuchungen zu einer Kategorie der bürgerlichen Gesellschaft*), որ արեւելահայերէնի թարգմանեց Հրաչյա Ստեփանյան, եւ հրատարակեց *Անկյունաքար* հրատարակչատունը: 1962-ին հրատարակուած այս գիրքը կարեւոր ներդրում մըն է ժողովրդավարութեան ժամանակակից ըմբռնումի ուղղութեամբ: Ան կը կենտրոնանայ հանրային ոլորտի ժողովրդավարացումի գործընթացին վրայ՝ հիմնուելով եւրոպական փորձառութեան վրայ

Ստեփանյան այսպէս կ'անդրադառնայ թարգմանական մարտահրաւերներուն՝ «*Յուրաքանչյուր թարգմանություն ունի իր բարդությունը՝ կապված հեղինակի ոճի, աշխարհայացքի, ասածի տարողունակության, օգտագործած բառամթերքի հետ: Այս գրքի թարգմանության պարագայում լրացուցիչ խնդիր էր դրված նաև հնարավորինս խուսափել օտարամուտ բառերից և օգտագործել հայերէն կամ հայերէնացված համարժեքներ: Բայց այս վերջին հանգամանքն իր հետ կարող է բերել մեկ այլ խնդիր՝ ընթերցելու դժվարությունը, առավել ևս, եթէ նախադասությունները բազմահարկ են և բազմաբարդ: Ընթերցանությունը նորահայտ, նորաստեղծ (կարող են լինել մի քանի տարբերակներ) կամ քիչ գործածական բառերով դժվարացնելու խնդրի լուծման արդյունավետ տարբերակ եմ համարում բառի օտարալեզու բնագիր ձևը փակագծում նշելը»:*

[\(Գիրքին մասին\)](#)

Երրորդ գիրքը՝ հրատարակուած *Նյումեգ*-ի (*Newmag*) կողմէ, Ալան Բադիուի «Դարը» աշխատութիւնն է (*Le Siècle*), որ արեւելահայերէնի թարգմանեց Նազենի Ղարիբյան: Գիրքը հրատարակուած է 2005-ին ֆրանսական Editions du Seuil-ի կողմէ, եւ քաղաքականութեան, փիլիսոփայութեան ու գրականութեան մասին է. ան կը միաւորէ այնպիսի մօտեցումներ եւ գիտակարգեր, որոնք ընդհանրապէս երկխօսութեան մէջ չեն ըլլար: Բադիուի վերլուծութիւնը մէկ կողմէ հիմնուած է 20-րդ դարու բանաստեղծութեան, թատրոնի եւ գրականութեան տեսութեան, եւ միւս կողմէ՝ դարու ամբողջատիրական իրողութիւններու հետ իր ունեցած եզակի հանդիպումներուն վրայ: Բադիուն իմաստալից պատումներ կը փնտռէ, որոնք սահմանափակուած չեն «տրամաբանութեան» կամ «տրամախոհութեան» հերթական մօտեցումներով:

«Թարգմանական գործը, եւ հատկապէս համաշխարհային փիլիսոփայական մտքի թարգմանությունը, ամենակարեւոր ռազմավարական ազդակն է ցանկացած լեզվի եւ մշակույթի, ցանկացած քաղաքակրթության զարգացման համար» նշեց Ղարիբյան, «այս առումով Կիւլպէնկեան Հիմնարկության ձեռնարկած թարգմանական մատենաշարը աննախադեպ հնարավորություն է ստեղծել՝ լրացնել մեր բացերը, որով ոչ միայն հայերեն լեզվով մտածելու համար նոր ու թարմ սնունդ է ընծեռնվում, այլեւ ուղղակիորեն հարստացուցիչ ազդեցության դաշտ է բացվում ժամանակակից հայերենի վրա, ինչն էլ իր հերթին ժամանակի ընթացքում անմիջականորեն կընդլայնի ստեղծարար մտահորիզոնը՝ գործունեության բոլոր բնագավառներում»:

[\(Գիրքին մասին\)](#)

Գալուստ Կիւլպէնկեան թարգմանական մատենաշարի գլխաւոր նպատակն է կամրջել երկու ափերը այն վիհին, որ գոյացած է Հայաստանի (ու Սփիւռքի) հայագիր մտաւորականութեան եւ արեւմտեան աշխարհի ընկերային գիտութիւններու ու մարդկային ուսմանց միջեւ: Մատենաշարը կազմուած է տասը գիրքերէ որոնցմէ ոչ մէկը ցարդ հայերէնի թարգմանուած է: Ծրագիրը կ'իրագործուի Հայաստանի մէջ, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ, սերտօրէն համագործակցելով ԱՐԻ գրականութեան հիմնարկին հետ:

Յառաջիկայ ամիսներուն պիտի հրատարակուին նաեւ հետեւեալ գիրքերը՝ Եղուարդ Սայիդ՝ «Արեւելաբանութիւն», Հաննա Արենդթ՝ «Ամբողջատիրության ակունքները», Միշել Ֆուկո՝ «Գիտելիքի հնագիտությունը» (վերնագիրի աշխատանքային թարգմանութիւն), Անտոնիո Գրամշի՝ «Բանտի տետրեր» (վերնագիրի աշխատանքային թարգմանութիւն), Սիմոն դը Բովուար՝ «Երկրորդ սեռը», Ջուդիթ Բաթլեր, Էռնեստո Լակլաու, Սլավոյ Ժիժեկ՝ «Դիպլոմատականություն, գերիշխանություն, միեղինություն. ժամանակակից երկխոսություններ ձախից» (վերնագիրի աշխատանքային թարգմանութիւն), եւ Ժան-Ֆրանսուա Լիոտար՝ «Հետարդիական կացություն» (եւ յարակից գործեր):

Գրքերը կարելի է գնել Երեւանի բոլոր հիմնական գրախանութներէն, Սփիւռքի քանի մը գրախանութներէ, եւ ԱՐԻ գրականութեան հիմնարկին միջոցով:

Գալուստ Կիւլպէնկեան թարգմանական մատենաշարին մասին յաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար կարդալ Բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանի յառաջաբանը:

[\(Թարգմանական մատենաշարի յառաջաբան\)](#)